

հայաստանի հանրապետության հաշվեքննիչ պալատի երկրորդ, չորրորդ եվ տասներորդ վարչություններում փորձագետներ ներգրավելու մասին

## **ԾՐԱԳԻՐ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ (ՏՆՏԵՍԱԳԵՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

#### **I. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

1. Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. տարեկան ծրագրով հաստատված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում հաշվեքննության շրջանակներում իրականացվող աշխատանքներով:

Վերոնշյալ հաշվեքննությունը իրականացնելու համար վարչությանը անհրաժեշտ է համապատասխան բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող տնտեսագետ փորձագետ:

#### **II. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում իրականացվող հաշվեքննության ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ուսումնասիրությունների կատարում:

#### **III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ**

3. Պայմանագիրը կնքելու պահից մինչև 2020 թվականի մարտի 31-ը:

#### **IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

4. Փորձագետի ներգրավմամբ ակնկալվում է վերջինիս մասնակցությամբ իրականացվող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում հաշվեքննության շրջանակներում իրականացվող աշխատանքների և համապատասխան ուսումնասիրությունների կատարմամբ:

## **V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

5. Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունը նախատեսվում է ներկայացնել մինչև 2020 թվականի ապրիլի 20-ը:

## **VI. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

6. Աշխատանքների գնահատման չափանիշ է հանդիսանում գործող օրենսդրությանը համապատասխան հաշվեքննվող կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրության իրականացումը:

## **VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

7. Փորձագետն իր իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածների իրավակարգավորումների:

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՉՈՐՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ (ԿՐԹԱԿԱՆ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

### I. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն) իրականացվող պետական բյուջեի մուտքերի և ելքերի կանոնակարգված գործունեության, ինչպես նաև 2020 թվականի պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություն աշխատանքների բարդությամբ և ծավալներով: Վերոնշյալ աշխատանքներն իրականացնելու համար վարչությանն անհրաժեշտ է կրթական ոլորտի փորձառու մասնագետ:

### II. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ 2020 թվականի հաշվեքննության տարեկան ծրագրով նշանակված հաշվեքննության իրականացում:

### III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

3. Պայմանագիրը կնքելու պահից մինչև 2021 թվականի փետրվարի 28-ը ներառյալ:

### VI. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

4. Փորձագետի ներգրավմամբ ակնկալվում է վերջինիս մասնակցությամբ իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական, համապատասխանության և կատարողականի հաշվեքննության շրջանակում Նախարարության հաշվեքննության միջոցով անհրաժեշտ վերահսկողություն և ներկայացնել դրանցից բխող համապատասխան առաջարկություններ:

## **V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

5. Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունը նախատեսվում է ներկայացնել մինչև 2021 թվականի փետրվարի 28-ը ներառյալ:

## **VI. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

6. Աշխատանքների գնահատման չափանիշներն են՝

1) Գործող օրենսդրությանը Նախարարության ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանության գնահատում.

2) Հաշվեքննությամբ արձանագրված գումարների ռիսկերի գնահատում և հաշվետվությունների կազմում:

## **VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

7. Փորձագետն իր իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածների իրավակարգավորումների:

## **ԾՐԱԳԻՐ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ (ՏՆՏԵՍԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

#### **I. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

1. Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018թ.-ի դեկտեմբերի 17-ի թիվ 20/6 կետով պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչման, երաշխավորման և պաշտպանության նկատմամբ հաշվեքննության շրջանակներում իրականացվող աշխատանքներով:

Վերոնշյալ հաշվեքննությունն իրականացնելու համար վարչությանն անհրաժեշտ է համապատասխան բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող տնտեսագետ փորձագետ:

#### **II. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

2. Պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչման, երաշխավորման և պաշտպանության նկատմամբ հաշվեքննության իրականացում:

#### **III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ**

3. Պայմանագիրը կնքելու պահից մինչև 2020 թվականի մայիսի 30-ը ներառյալ:

#### **IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

4. Փորձագետի ներգրավմամբ ակնկալվում է վերջինիս մասնակցությունը հաշվեքննության շրջանակներում իրականացվող աշխատանքներին և համապատասխան հաշվեքննությանը:

#### **V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

5. Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունը նախատեսվում է ներկայացնել մինչև 2020 թվականի մայիսի 20-ը:

## VI. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6. Աշխատանքների գնահատման չափանիշ է հանդիսանում գործող օրենսդրությանը համապատասխան հաշվեքննվող կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրության իրականացումը:

## VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Փորձագետն իր իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածների իրավակարգավորումների:

### **Հարցազրույցին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝**

- Դիմում ([ձևը կցվում է](#)),
- մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ների/, վկայականի/ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

### **Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 12.02.2020թ.**

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

ք. Երևան, Բաղրամյան 19, ՀՀ հաշվեքննիչ պալատ

հեռ. 011-888-145, էլ.փոստ՝ [kadrer@armsai.am](mailto:kadrer@armsai.am):

**Հարցազրույցին անհրաժեշտ է ներկայանալ անձը հավաստող փաստաթղթով և ներկայացված փաստաթղթերի բնօրինակներով:**